



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 24 ՅՈՒՆՈՒԱՐ 1887

ԹԻԻ 3857

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ռ. Հ.	Ազգային
ՄԵԼԱՆԻՈՒ	Թիֆլիսէն նամակ
Ս. ՊԵՏԻՐԵԱՆ	Աղջկան մը օրագիրն
Գ.Ս.ՄԵՐ	Վրացի Տատեանք
	Գրադատական
	(Արտաշէս)
Ա. ՍՐՓԻԱՐԵԱՆ	Դերասանուհին
	Աստի անտի
	Օրագիր

ՄԱՍԻՒՍ

Կը հրատարակուի Կ. Պոլիս, Շաբաթ օր, Հատը 40 փարս.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիս, տարեկան Կէս օսկի օսմ.
 » փեցամսեայ Քաղ.
 Կառավարը 70 դաշնական մէծրտ.
 Արտասահման, 15 Փառնգ.

Դրամը խրկել

Առ մատակարարութիւն

Արեւել և Մասիս:

Հասցէ

Ղալաթիա, Նորատուփեան - խան
Կոստանդնուպոլիս

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 23 ՅՈՒՆՈՒԱՐ

ԱՂԳԱՅԻՆ

Երանի՛ այն աղգերուն որը զուրկ են Ազգային ժողով մը ունենալու չափութեանէն, Կըսեն սահմանադրական ժողովրդաց յետադէմ թերթերը. մենք ալ արժանի ենք այժմ այս երանիին: Բաւական ժամանակ է որ խոր լուծիւն մը տիրած է նկատմամբ Ազգ. ժողովոյ. կարելի է հարցնել թէ արդեօք կարգադրուած են աղգային ամէն գործերն եւ թէ հասած է մեզ համար հանգըստանալու ժամանակն:

Արդէն ամէն ինչ մշուշի մէջ է, ուրեմն մեզաւոր չենք եթէ անհնար լինի մեզ մեկնութիւն մը գտնել Ազգ. ժողովոյ նիստերու յետաձգման: Եթէ կարենայինք թափանցել Նրուստադեմտան որմերէն ներս: գուցէ կարելի լինէր գաղտնիքը պարզել, բայց սակաւթիւն ընտրեալները միայն կըրնան փայլել այդ մենաշնորհն:

Երբ Մերեմ-Գուլի Յարութիւն էֆէնտի ընտրուեցաւ Ատենապետ Ազգ. ժողովոյ, մի մասն երեսփոխանաց որը ջերմ հակառակորդներ էին Յաւաճող իմական միութեան

պետին, իրենց եւանդագիրն աճակցութիւնը նուիրեցին: Մէրեմ-Գուլի էֆէնտի ընտրութեան յաթում Ատենապետութեան Ազգ. ժողովոյ: Այդ երեսփոխաններն արդարեւ ցնեւու համար իրենց տարօրինակ համակրութիւնը Մէրեմ-Գուլի էֆէնտի համար կ'առարկէին թէ՛ Մէրեմ-Գուլի էֆէնտին ջերմ նախանձախնդիր է Ազգ. ժողովոյ ստեղծողութեան, հետեւաբար նա միայն կարող է անխափան կերպով շարունակել առ Ազգ. ժողովոյ նիստերն:

Բայց գուցէ Մէրեմ-Գուլի էֆէնտին այն համոզումն ունենայ թէ՛ Ազգ. ժողովն մի քանի տարիներէ ի վեր շարունակ սխալներ գործելու հետամուտ լինելով, լաւ է որ այլ եւս ի նիստ չգումարի եւ որոշումներ չտայ, ինչ որ Ազգ. ժողովոյ բաւարարէ գործը կրնայ լինել: Այսպիսի համոզում մի եթէ ներքին է աւելն երեսփոխանի, բնական է որ մի քիչ անհեթեթ երեւի, երբ Ազգ. ժողովոյ Ատենապետն է որ կ'ունենայ այդ համոզումն: Եւ սակայն Ս. Պ. ժողովոյ 1888-1887/ի երեսփոխանութեան ժամանակը մտեցած է: Այդ օրն ի հարկէ Ատենապետ էֆէնտին պիտի կարգայ մ: ձառ, յորում միտա մի պիտի բացատրէ թէ Ազգ. ժողովն այս չքանի մէջ ինչ կենսական գործեր տեսաւ, որքան նպաստեց Ազգային յաւաքողութեան: Եւ մենք պիտի ծափահարենք: Ամէն ինչ լաւ վերջացած է:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՄԱՍԻՍ»Ի

ՏՓՂԻՍ, 6 յունվարի

Նոր տարին սկսուեցաւ: Ամենայն ուրախութեամբ կը ցանկանայինք մի տեսութիւն անել անցեալ թուականի նշանաւոր հասարակական աղգային իրողութիւնների ու երեւոյթների վրա. կ'ուզենայինք հազարդել ձեզ այն տրամադրութիւններն, որոնք նկատելի են գուցէ նոր տարուայ առթիւ, բայց տարաբաղաբար համարեա ոչինչ նշանաւոր բան չունինք հազարդելու: Ուստի հայաց կեանքի մէջ անցեալ տարին շատ փախեց և ծաւալ անցաւ: այդ վիճակը շարունակվում է և այժմ, երբ արդէն օտք ենք դրել նոր տարուայ մէջ: Մեր գրական, լրագրական, եկեղեցական, ընկերական և ուրիշ շատ հասարակական կեանքի չընթանք մէջ անցեալ թուականը մի զորեղ հետք չ'ընդհատ:

Տեսնական ճգնաժամը շարունակվում է: Ուստի կառավարութեան յարաբերութիւնը դէպ ի հայ ժողովուրդը նայն է և նայն ուղղութեամբ էլ շարունակվում է: Իսկ այդ ուղղութիւնը զիտէ՞ք թէ ինչ է և ո՞ր է տանում: Մեր բացումը գործընթացը շարունակում են իրանց օղորմելի և կապիւններ

զրուցիւնը: Մեր ընկերութիւնները շարունակում են անբեւոյժ դրութեան մէջ մնալ, առանց միջոց ունենալու չօգտիւն մի գործ տեսնել: Մեր գրականութիւնը մի աչքի ընկնող բայց չարեց: Իսկ լրագրութիւնը սաստիկ ճնշման ներքոյ՝ հազիւ կարողանում է շունչ բաշել: Ընդհանրապէս զրուցիւնն այնպիսի է, որ ամէնքս էլ կարծէք սպասումներ մի աւելի լաւ ժամանակի, անկարելի համարելով այս դրութեան մէջ մնալ: Իսկ երբ պէտք է հասնի այդ լաւ ժամանակն, արդեօք նոր թուականը պէտք է մի փոփոխութիւն մտցնէ՞ Ռուսահայերի հասարակական կեանքի մէջ: առայժմ դ որս նշանները չեն երեւում, ճիշդ ապագայում կարելի է խմանալ: Զարմանալի չէ ուրեմն, որ տխուր և մռայլ տրամադրութիւն է տիրապետում հասարակական կեանքի վրա: Դաւառներից ախար լուրեր են գալիս ժողովրդեան աղքատութեան մասին, մտաւոր անշարժութեան մասին: Զինուորագրութեան հարցն էլ աւելի ծանրացնում է ժողովրդեան վիճակն: այս տարուանից պէտք է սկսի վիճուոր հաւաքելը: հայերը չեն կարողանում հաշտ աչքով նայել այդ բանի վրա, ամէնքն էլ այն համոզմունքն են, որ վիճուորագրութիւնը մի շատ ծանր հարցաւ կ'այտայ մեր ժողովրդեան բարոյական և տնտեսական կեանքին: Ռուս կառավարութեան համար այդ էլ մի միջոց է՝ մեղցնելու հայ ժողովրդեան ինքնուրուշութեան պծն եւ հոգին:

Վատ լուրեր են գալիս Պարսկաստանից: Մշտ լրագրիւր տպեց մի քանի թղթակցութիւններ Պարսկաստանից, որոնք ծանր տպաւորութիւն թողեցին: Պարսկաստանում տեղական իշխանութիւնները չեն կարողանում հաշտել հայ տարրի հետ: յաւաքատութիւն է տիրապետում այնտեղ, և հենց այդ պատճառով կրօնափոխական պրօպագանտան (ծաւալումը) մեծ քայլերով առաջ է գնում: Աւրիշ միջոց չ'կայ բազմատեսակ շարժքների վրա ուղղութիւն հրաւիրելու բայց թէ հայ լրագրութիւնը թէ Պետերբուրգի և թէ Կովկասի Ռուսաց լրագիրները չեն էլ մտածում ճայն բարձրացնելու փոքրիկ աղգութիւնների ծանր դրութեան մասին: Իսկ հայ լրագրութիւնը խօսելու միջոց չ'ունի: Ամենայնիստ կերպով են գործում գրաբնական իշխանութիւններն: Այդ դեռ բաւական չէ, հերիք չէ որ Հայոց լրագրերը չի կարող բողբել կառավարութեան այս կամ այն պաշտօնեա ի զեղծումների դէմ, այլ և Հայոց լրագիրը չի կարող խօսել այն զեղծումների դէմ, որոնք ամենայն օր կատարվում են Հայոց եկեղեցում, հայ հոգեւորականութեան մէջ: Նայն ինքն Կաթողիկոսը դիմել է Կառավարութեան խնդրելով, որ իր և իր հօտի մասին ոչինչ բան թող չ'որոշի: Մշտ որ մի քանի տարիներ առաջ իւր խիստ մերկա-

Թէ՛ք բրիտանացիներն հակառական կը-
րօնք մ'է՛. ո՛չ, ո՛չ. լերան վրայ քարոզեց,
լերան վրայ խաչուեցաւ աստուածամարդն.
Աստուծոյ վեհագոյն տաճարն՝ ըստ Գրիս-
տոսի՝ բնութիւնն էր. ինչպէս կրնանք ան-
բնական համարել քրիստոնէական կրօնքն:
Անբնական մենք ըրինք զայն, իւր պարզու-
թեւէն հետըզհետէ հեռացուցինք քրիստո-
նէութիւնն. յանցանքն Յիսուսին է. Նա ո՛ր-
քան հակասական է Հիւզմանդ, զոր ես ալ
սակայն այնքան կը յարգեմ. արուեստին
եւ քաղաքակրթութեան հարազատ զա-
ւակն է իւր զլիաւոր գործին դիւցազնն, երբ
գործին տխրոսն է՝ A rebours. Նո՛ւ ես եր-
թալով է որ մարդ կը հասնի արուեստին,
քաղաքակրթութեան:

Կարս կը կարէի եւ այսպէս կը խորհէի.
Եւ ահա Տիկին Գէորգեան եկաւ աղջկանն
հետ. Մայրս երբ յայտնեց թէ աղքատ տղ-
ղայոց համար շապիկներ կը կարէի, լեցուե-
ցան Նարդիկին աչքերն, ասեղ թել մ'առաւ
եւ շապիկ մ'ալ ինք սկսաւ կարել: Աքան-
չելի, սրանչելի աղջիկ է Նարդիկ: Երկու
մարդ խօսակցեցան. Նոր Մա՛թի վրայ դա-
տաստաններ կը յայտնէին. Տիկին Գէորգ-
եան աւելի ազնուապետական, աւելի պահ-
պանողական կարծիքներ ունի. իսկ մայրս
ըսաւ. «Վերջապէս կարգաւոր թերթ մ'ու-
նեցանք»: Մայրս կը գտնէ թէ անձուկ խը-
նամութիւն մը կայ այդ երկու մտաց միջեւ,
Արիւարեանին ու Տէմիրճիպաշեանին, եր-
կու ռաւակաւարական երիտասարդներ՝ ոյց
երկուքին հաւը ալ պէտք ունեցած են. եր-
կու մտաց ալ յատկանշին է անկախութիւն.
Նաեւ սփռակնին դէմ խորին հակակրու-
թիւն: Կը քննադատեն առանց զիրքի նկա-
տողութեան, եւ գրական քննադատութիւն
կը զոհեն իրենց նիւթական շահն. «Նոր,
նոր», այս է իրենց նշանաբանն: Եւ երկուքն
ալ սկսան նորապէսներ գրել. Եթէ Արիւ-
արեանի նորապէսը Կեանքի Պատկերն էր
կոչուին, Տէմիրճիպաշեանի նորապէսը կըր-
նային անուանիլ Իրական անպիշք: Երբ Մի-
նաս Չերազ հիմնադրի ընդհանուր գալու-
ցին՝ կը նորէ, կը կանոնաւորէ, կը Ֆառն-
սացնէ, կը պերճացնէ հայ լեզուն եւ ոճն,
Արիւարեան եւ Տէմիրճիպաշեան կը ջանան
հայացնել Ֆառնսական արդի գրականու-
թիւնն. — Այսպէս կը խօսէր մայրս Տիկին
Գէորգեանին բոլոր համակրութիւնն Առ-
ջն Կեանքի հեղինակին համար է. իւր
կարծեօք Պերպերեան՝ երբ ազնուականաց
դէմ չը գրեր՝ Հայոց առաջին մատենագիրն
է: Ազնիւ կերպարանք մը՝ այդ խօսակցու-
թեանց միջոցին՝ հեռաւոր ամենախոր աստ-
ղի մը պէս աղօթ եւ աղու կը հայէր ինձ.
Ինչեւ առաջ անձայն կը կրկնէի, մինչ ա-
ղօս եւ աղու կը հայէր ինձ՝ երկնից եռա-
դոյն խորութեանց մէջէն հայոց հաստա-
տուն աստղի մը նման՝ այն ազնիւ Կարա-
պետ Գարագաշն. Տիկին Գէորգեան հար-
ցուց իօրս թէ Արեւելի Սրբա՛ն Օտեան է-
էֆէնտին չէ՞ր. «Արեւն հոս է» պատասխա-
նեց մայրս. «Արեւն Օտեան էֆէնտին չէ՛,
բայց մին է այն հաղուադիւտ պատանեաց՝
ոյց ճակարին վրայ դրած է մատն Օտեան
Ֆէնտին. Արեւն Հրանտ Ասատուրն է»: Այս
խօսքին վրայ խոր լուծիւն տիրեց. Օտեան
էֆէնտին, մա՛րթ է արտասանել
այսօր այդ անունն առանց անսահման սըր-
տայուցութեան. Օտեան էֆէնտին:

22 Նոյն

Այսօր տխուր էի բոլոր օրն: Երեկուան
տրտմութիւնս էր որ կը շարունակէր: Գրա-
ցի տան թռչնոյն երգն այսօր լսեցի միշտ.

յիշեցի մինչեւ իրիկուն մեծ վտարանդին
եւ իւր թռչուններն: Արդեօք միշտ կը պա-
հէ՞ թռչուն: Բայց ուրիշ թռչուն հիմա կը
տարածուին իւր վրայ, սիրեցեալ անձնու-
րաց քրոջ մը թռչունն: Ինչ անհուն հա-
մակրութիւն եւ երախտագիտութիւն կը
զգամ սրտին մէջ Օրիորդ Եւփիմէ Օտեանին
համար, Արեւն Գոմարեանի քաղաքու-
թագմանչուհոյն համար, Հայկազն վտա-
րանդուոյն պահապան հրեշտակին համար:

Յիշեցի նաեւ Օտեան էֆէնտին ման-
կութեան ընկերներէն մին, հէ՛ք Փափագ-
եան Գարեգին էֆէնտին, որ անողոր հի-
ւանդութեան դէմ այնքան մաքառեցաւ
այլ որ հոսկ ուրեմն յաղթուեցաւ: Անցեալ
շաբթու նորէն այցելութեան գացի Մակ-
րինէին եւ Իսկուհիին: Փոքրիկ Գնարն, ա՛խ,
այն ալ սեւ հագեր է: Սիրտս ճմուռեցաւ,
այլ եւ դիւթուեցաւ այն օր: Հոն պէտք
էր, Նուրանիա՛. Չերմակ աղւոր սեւաչուի
փոքրիկ հրեշտակ աղջիկ մը, դէմքէն ու
թաթիկներէն դատ սեւով ծածկուած ծը-
րարուած. քնար մը մէկ ձեռքն, երգարան
մը միւս ձեռքն. այսպէս ներկայացաւ ինձ
այն օր Գնարիկն: Գոյրերն՝ այս կերպով կը
ջանային մոռցնել տալ մանկան եւ պահիկ
մ'իրենք ալ մոռնալ իրենց որբութիւնն...
Ինձ ու ձեռքի թուղթին փոփոխակի կը
նայէր այն երկամեայ քնարեգակն. ինչ
կար թղթոյն վրայ. — ոտանաւոր մը, ման-
կան ու մանկութեան վրայ զուարթ ոտա-
նաւոր մը, զոր գրած էր Գրագաշ Ստոմ՝
երբ դեռ կենդանի էր, երբ դեռ ողջ ա-
ռողջ էր Գարեգին էֆէնտին: Գնարիկ՝ զը-
ւարթ օրերու տաղին կը նայէր, այլ զուարթ
չէր, աւա՛ղ. հայրիկն ալ տուն չէր գար
ամեն երեկոյ Գնարին առջեւ պարպել ձեռ-
մակ թաշիկնակն եւ մանկան այտերուն վրայ
իր սիրտն... Եթէ ձեռքս սքանչելի բանաս-
տեղութիւն մը կամ նկար մը հասնի՝ ում
անձանօթ ըլլաս դու, կը յղեմ զայն քեզ.
Բայց ի՞նչպէս զքեզ հաղորդակից ընէ՞ թե-
րեւս ամենէն վաւթ բանաստեղծութեան
կամ պատկերին, զոր ինձ տրուեցաւ վայե-
լել այն օր՝ հօրս այն տարաբաղդ բարեկա-
մին սեւասքօղ յարկին տակ:

23 Նոյն

Հօրս գաւառացի բարեկամներէն մին՝
նմա խորհուրդ հարցուցած է իւր տղուն
նկատմամբ. Տղան տասներեք տարեկան է.
հայրն՝ որ ուշիմ մարդ մ'է՛ կը տեսնէ թէ
չարաչար կ'աշխատի գաւակն, այլ աշխատու-
թեան համեմատ չէ բնաւ արդիւնքն: Երէկ
գիշեր, հայրս հետն առեր եկեր է գաւա-
ռացի պատանին. զայն ընկել տուաւ ինձ.
Այո՛, շատ ուսում կ'առնէ տղան, այլ գրէ
թէ բնաւ բան չը գիտեր: Երբ առանց գրքի
հարցուցի, տասն հարցմանց միոյն հազիւ կըր-
ցաւ պատասխանել. գրքով հարցուցի, հինգ
հարցմանց միայն պատասխանեց, այսինքն
նուազաւոր եղանակաւ կրկնեց թուրքերէն
գրքին մէջ եղածն. Ա՛հ, ինչ յոռի գրութիւն
է որ տակաւին ի գործ կը դրուի վարժարա-
նաց մէջ: Ոչ որ կարեւորութիւն կուտայ
Բէսդալօճճի խօսքին. «Յամաք դասագրքով
դասատուութիւնն ըզտղայն՝ կը բանտարկէ
միանգամայն իրեն հարցուած որոշ ու սահ-
մանաւոր նիւթոյն մէջ, հարցման ձեւին մէջ,
դասատուին գիտութեան սահմաններուն
մէջ, եւ մանաւանդ այն նախանձոտ խը-
նամով գծուած սահմանաց մէջ՝ որք եղած
են որպէս զի տղուն արգելուն չեղիլ սովոր-
աւորութեան ճամբէն: Բարեկամ, տղայոց
դէմ ինչ սոսկալի պատուարք բարձրացած
են, եւ որք բոլորովին կը կործանին իմ ու-
սուցման եղանակաւս:» Ա՛հ է այդ եղա-

նակն, ո՞վ գիտէ զայն, ո՞վ պիտ' ուսումնա-
սիրէ եւ ուսուցանէ զայն: Ոչ որ, կամ յոյժ
յոյժ սակաւը:

24 Նոյն

Այսօր շաբաթ է. չը պիտի գրեմ Միթէ
Հրեայ չեմ ես որքան Հայ, Միթէ Սաղմուն
ալ չեմ պաշտեր Եղիշէին չափ:

ՄԵԼԱՆԻԱ

ԼԵՉՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ՎՐԱՅԻ ՏԱՏԵԱՆԸ

Երբ Մկրեկ կամ Մնկրեկ իշխանը Պուլ-
կարիոյ իշխանութեան ընտրելի ներկայաց-
ուեցաւ, կարծեմ մի քանի եւրոպական եւ
ընդ նոսին Պոլիս հրատարակեալ թերթեր
ծանուցին ի մէջ այլոց նաեւ թէ՛ յիշեալ իշ-
խանին մականունը Տատեան կը յորժորթի, եւ

Կուզէի յայնժամ այդ Տատեան մական-
ուն վրայ ունեցած տեղեկութիւնս հա-
ղորդել ձեզ՝ իբրեւ պատմական լուս մի տե-
ղեկութիւն, բայց այդ մասին ինչ ինչ տա-
րակուսութիւնք յամեցուցին զիս ցարդ:
Ուստի այժմ նոյն տարակուսանք ըստ իս
լուծուած ըլլալուն համար, այդ Տատեան
բառին կամ մականունն վրայ իմ պատմա-
կան տեղեկութիւնք հետեւեալներն են:

Նախ հոչակաւորն Քեաթիպ չէլէպի (*).
հմուտ պատմաբան եւ աշխարհագէտ Օս-
մանեան պետութեան՝ որ ժամանակակից
էր երրորդ Սուլթան Մուրատայ, և չորրորդ
Սուլթան Մէհմէտայ, իւր Յեղեթէ Քե-
թիպ չէլէպի անուն պատմութեան առաջին
հատորին 87րդ երեսին մէջ, երբ կը պատ-
մէ վերոյիշեալ Սուլթան Մուրատայ ժամա-
նակ Օսմանեան բռնակաց ի Պարսկաստան
և ի Վրաստան արշաւանքն ի ժամանակա Ա.
Շահապասայ՝ արքային Պարսից ի 1623
այդ Տատեան իշխանին վրայ հետեւեալ պատ-
մութիւնը կ'ընէ, զոր կը թարգմանեմ առա-
համաօտելով.

«Խորտակումն Սեփի սէրտարին Վրաս-
տանի:

«Ի սկզբանէ անտի Վրաստանի իշխան-
ները այդ նախարարական (սիրս) իշխա-
նութեանն հպատակելով, մինչդեռ թըլ-
նամեաց յարձակումներէն աղաւտուած ան-
«դորրութեամբ կ'ապրէին, նոյն իշխաննե-
«րէն ումանք, Շահին խորամանկ խօսքերէն
«հրապուրուելով, անոր հպատակութիւն
«յայտնեցին, բայց այդ հպատակութիւնն
«իրենց համար տխուր հետեւութիւններ ու-
«նեցաւ՝ որ սրով եւ գերութեամբ վերջա-

(*) Այս անձն որ Հաճի Խալիֆէ ալ կ'ըս-
ուի, ի մէջ գիտնականացն դասուց Օսման-
եան պետութեան խիստ անուանի էր և է
իւր գրականութեամբ և զանազան օգտա-
կար հեղինակութեամբ, որոց մին է եւ
զայս պատմութիւն, և հետաւից աշխարհա-
գրութիւնն, զոր Հայր Ղուկաս վարդապետ
Ինձրճեան իւր հեղինակած աշխարհագրու-
թեան Ասիական հատորին մէջ ստեղծ կը յի-
շէ և շատ մը պարագայներու մէջ եւս անոր
գիմած է ըստ ասացելոյն Քեաթիպ չէլէ-
պիի, յայն սակաւ գրէ Քեաթիպ չէլէպին
ըսելով:

Այս անձ վախճանած է 1680 թուա-
կանին Քրիստոսի, ի ժամանակա չորրորդ
Սուլթան Մուրատայ:

«Երա՛ն ասկայն Ձեռքի՛ն իշխան թե՛նք»
«Իսկանն որ շատ քաջադործութիւններ ըրած
էր» այլ եւս չլարենալով հանդուրժել
այդպէս խժոժութեանց, ուստի այս ան-
գամ Վրաստանի Գարթուլի իշխան Մա-
գար Օւան և Կիւրէի Տաթեան Աւագը և
գլխաւոր իշխաններուն հետ միանալով
այդ խժոժութեանց վերջ տուին ։

Նոյն հատորին 1899-ը երեսին մէջ եւս
հետեւեալը կը պատմէ, Թ. Ք. 1833 ։

«Հանգամանք Վրաստանի

«Ջիւհիճճէի հինգերորդ օրն (Հիճրէթի
«103A) Խալիլ փաշայէն եկած նամակին մէջ
«Տաթեան և Կիւրէի իրարու հետ համա-
«ձայնելով Պարսից կողմն բռնելին կը ծա-
«նուցանէ՛ կը յարէ նաեւ թէ՛ Տաթեան իւր
«աղջիկը Դաւիթ կողմանէ իբրեւ իշխան
«կարգուած Խալիլ-Մեղրին տալով, երբ
«այդ աղջիկը Աւագ-Մեղրու երկրէն պիտի
«անցունէին, Աւագ պաշ եւ թէ՛ միւրէս իշ-
«խանը հակառակեցան անոնց ճամբայ շտա-
«պու համար ։ ուստի մէկ կողմանէ յիշեալ
«Խալիլ-Մեղրան եռեսուն հազար պարսիկ
«զօրքով և միւս կողմանէ Տաթեան և Կիւրէի
«Աւագ պաշներուն վրայ յարձակելով, մեծ
«կատարած տրուելէն զինք, ըստ կամաց
«Տեառն Տաթեան յաղթանակեց, ուստի թէ՛
«միւրէսն եւ իւր ընկերք առապարաց եւ
«քարաժայռից մէջ ապաստանեցան ։ Վեր-
«ջապէս, երբ Տաթեան իւր գաղանկաց հետ
«հետ Սեւ ծովու սահմանադրութիւններն եւս
«ապաստակելու սկսաւ, յայնժամ Օսմանեան
«իշխանութիւնը թէ՛ ցամաքէն և թէ՛ ծովու
«կողմանէ բանակներ զրկեց ապաստակելու
«համար Տաթեանի եւ իւր համախոհին երկր-
«ներն ։

Երկրորդ, Թաթեի ձեռքի(*) հատոր 3րդ
150րդ երեսին մէջ նաեւ Տաթեանի մասին
գրածն իւր իսկ բարբառով կը փոխադրեմ
աստ ։

«Ի՞նչ է Կիւրճիսթան տախիս պու վե՛ճ,
«ի՞նչ իբի գըթայէ միւնդասամ օլարագ, պիւր
«գըթասը Աւագը, վէ Միւրէի վէ Կիւրէի
«Տաթեանը Երեսն եանի պէյլիլէրի օլուպ,
«(Թիֆլիս հագմինէ Խան վէ Տաղիսթան շի-
«մալինտէ վագի Պոյնուգ մէմէթէթի հաքի-
«մինէ չեփաւ տէնիլտիլի կիպի Աւագ պաշ վէ
«Կիւրէի վէ Միւրէի հաքիմէրինէ տախի
«Տաթեան տէնիլտիլ) վէ Գարս տէնիլդ սէ-
«վահիլինէ տէկ միւմթէտ օլուսուր ։

Երրորդ, կը գրէ գայմանէ նաեւ Գե-
րապատիւ Հայր Ղեւոնդ Ալիշան իւր քա-
ղաքական աշխատագրութեան 356րդ երե-
սին մէջ այսպէս ։ «Միւրէի կամ Մագոն առ
«երի կայ ափսաղաց... երեք գլխաւոր
«մասունք են գաւառիս, Օտիքի, Լէշլում
«և Սուան կամ Սուանէթ... առ Յուսուխ-
«անոն պատերազմեցան ընդ Հոսումն և ըն-
«ձկալան գերիտոմէթիւն ։ ի միջին դարն
«մէկը կային ընդ իշխանութեամբ ափսա-
«ղաց, եւ այլք այստ մինչեւ ցամա 1833,
«սորում կամովին հնազանդեցան Ռուսաց...
«երկի գաւառ Միւրէի, որ է մասն Կողբ-
«եաց է Օտիքի, եւ սորա համադրը և հա-
«մալեզուր նախնի վրայ ի 14րդ դարէ եւ
«յոր առանձին իշխանաւ վարեն չոր Տաթ-
«եան կողմ, այժմու Տաթեան Լեւան կամ
«Լեւոն ընդ պաշտպանութեանն Ռուսաց
«կայ ապաստեցն, ըստ հայրենի ախորժակաց
«յար յորսորդութիւն դեգերելով ։ Համարէն
«բնակիցը Միւրէից համարին 70,000 ։

(*) Ներկայ Արդարութեան գործոց նա-
խարա, ձեռքի փաշային գրած 12 հատոր
Օսմ. պատմութիւնը ։

«Զօպտիտի կամ Զոպտիտի, գլխաւոր եւ
«հին աւան աթոռ է Տաթեանին ։

Մի քանի տող ալ իմ գիտողութիւնս
Տաթեան բառին վրայ ։

Աւագին ։ Պարսիկը և, իսկ և Խան յոգ-
նականացուցիչ մասնիկ մը ունին, որ կը-
սեն, Փէշտաբան, Փէշեան, Աշտեան (Ար-
շակունեան) ։ Սասանեան ևս արդ, եթէ այդ
փիլիսոփայեան բառին փէշ նախդիրն որ ա-
ռաջ կամ առաջին ըսել է, վերցնես, կը միա-
բարեան, եթէ Խան մասնիկն ալ վերցնեմք կը
մնայ լոկ արդ, որ ըստ պարսկական ոճոյ ի-
րաւունք եւ արդարութիւն կը նշանակէ մեր
դարձումն բաւական համաձայնելով Ռու-
տի, փէշտաբ կը նշանակէ ըստ պարսկական
ձայնի, սկիզբն արդարութեան կամ իշխա-
նութեան, վասն որոյ հին Պարսից Փագա-
ւորական ազգատոհմին անունը փէշտաբան
կը յորջորջուի իրենց պատմութեան մէջ ։

Երկրորդ. Եւ որովհետեւ 10րդ դարու
վերջերէն սկսելով մինչ 18րդ դարին վեր-
ջերը Պարսիկը շատ գործեր ունեցած են
Վրաստանի եւ Միւրէի հարստութեանց
հետ ։ եւ որովհետեւ կը կարդանք անոնց
պատմութեան մէջ թէ՛ Պարսիկը իրենց ափ-
րած նահանգաց եւ գաւառաց անուններն
եւ աղոնց մէջ տիրող իշխանաց անուններն
անգամ փոխելով, պարսկական ոճով կը
յորջորջեն զայնս, վասն որոյ շատ հաւա-
նական է որ երբ Վրաստան եւ ընդ նոսին
Միւրէի Պարսից իշխանութեան ներքեւ
ինկան, այդ դաւառին անունը փոխեցին,
կամ անոր իշխանին Տաթեան մականունը
տուին որ իշխանականը, պետականը կը նը-
շանակէ լոկ ։

Ա. ՊԵՇԵՐԵԱՆ

15 յունուար 1887
Պզտիկ Նոր-խան Կ. Պոլիս

Գ Ր Ա Դ Ա Տ Ա Կ Ա Ն

Ա Ր Ա Ք Ս Ի Ա

Կ Ա Ս

Վ Ա Ր Ժ Ո Ւ Յ Ի Ն

Վէպ Տիկին Սրբուհի Տիւսաբի. — Հրա-
տարակող Բիւզանդեան Գրատուն. — Կ. Պո-
լիս, Ի Տպարանի «Արեւելք» Օրագրոյ 1887 ։

Տիկին Տիւսաբի նոր վէպն այն կարգի
գործերէն է որք չեն կրնար մէկ շունչով
կարդացուիլ ու գնահատուիլ ։ Հանդարտ
մտքով գրուած՝ հանդարտութեամբ կա-
յացուելու եւ ընթերցողին մտաց վրայ
մեղմ ապաւորութիւն մը թողլու սահման-
եալ գիրք մ'է Ա.Ր.Ա.Ք.Ս.Ի.Ա. Այս հանգա-
մանը գուցէ այնքան շարունակէ չ'երեւի ա-
նոնց համար որք միակական նոր գաղտնի
հարազատ հետեւողը՝ կենաց ամենէն իրա-
կան կողմերը նկարագրող եւ ճանաչողի
դասն հեգնութիւնները բնական ճշդու-
թեամբ պատկերացնող էջերու մէջ կը փրկ-
տան յազորդ իրենց հետաքրքրութեան ։
Հին աշխարհին կը սլափանի իրենց հա-
մար ինչ որ կը խօսի անմեղ սիրոյ, առա-
քինութեան յաղթանակին և չարին դա-
տապարտութեան վրայ ։ այդ զրօշակին ծա-
ռայողը տակուսին այնքան բազմացած չ'են
ի մեզ, հետեւաբար Ա.Ր.Ա.Ք.Ս.Ի. հեղինակն
մասնէ կրնայ լինիլ թէ ստուար թուով ըն-

թերցողներ ու համակրողներ պիտի գտնեն
իւր այս ու յաջորդ գործերն ալ ։ Արդէն,
մին քան քմիւն երեք սիրուն երկեր հանե-
լով ի հրապարակ, նա բաւական ցոյց տուաւ
թէ կոչուած է կարեւոր տեղ մը գրա-
ւել աշխարհիկ գրականութեան մէջ ։ Իւր
վերջին վէպն, ինչպէս նախորդներն
ալ, բաղուած է Պոլսոյ կեանքէ ։ Պոլսի չէ
մտքերէ որք բնական շատ մօտ են ։ այլ
ամենէն աւելի գնահատելի են իւր այն
տողերն որք կը նկարագրեն կուսական օէր,
աշխիւ գգացում, բարի սիրտ ։ Եւ միթէ
խառնապահանջ լինիլ չէ՞ կենաց յոռի կող-
մերն ու կեղտոտ պայքարները պատկերա-
ցնող գործ մը պահանջել կրն հեղինակէ մը ։

«Սիրեցեալ դուստր իմ, կ'ըսէ Տիկին
«Տիւսաբ իւր 2օրին մէջ առ Տօսին, տղա,
«հասակէդ սկսէ սիրել զաշխատութիւն
«իրերէ զՍրաքիա լուսաւորէ՛ միտքդ միշտ,
«կոխէ՛ աներկիւղ ընկերական նախապա-
«պաշարմանց վրայ, լե՛ր արդար սկզբանց
«պաշտպան, բարեկամ տկարին, թշնամի
«զոռոգին ։ Լե՛ր դու բեղմով և սեռիդ ար-
«ժանապատուութեամբ ։ Բարոյապէս դոյն
«սո՛ւնեցիր, ու այդ գոյնով ասլը՛ մինչ
«ցովերը կենացդ ։»

Ահա՛ նշանաբանն Ա.Ր.Ա.Ք.Ս.Ի. պարզ
2օն մը չեն այս տողեր, այլ կ'ամփոփեն հե-
ղինակին սկզբունքը, նպատակն և գործոյն
բոլոր հոգին ։

Քննենք այժմ վէպին անձինքն ու գոր-
ծողութիւններն իրենց գլխաւոր գծերու
մէջ ։ Համակրելի արարած մ'է Սրաքիա՝
աղքատ ընտանեաց գաւալ, այլ դաստիա-
րակեալ ու բարձր դպացմանց տէր ։ Հայրը
առեւած անցուցած մարդ, այժմ կաթ-
ուածահար ։ իսկ մայրը՝ մեծամիտ ու ամ-
բարտաւան, որ կը գանդատի միշտ ամուս-
նոյն դժբաղդութենէն ։ Իւր նկարագիրը
կրնայ լինիլ ։ «Վան այնպիսի կանայք որք
«գողցես կ'ուզեն բաղդակից լինիլ իրենց
«ամուսնոյն բարեբաւտ աւուրց և չեն նե-
«ւերեր որ եւ է դժբաղդութեան ուսկից
«իրենք բաժին պիտի ունենան ։ Իբր ըն-
«տանեաց ստանձն արամտութիւն և դաւ-
«նութիւն կը շնչեն, և դժգոհութեան թոյն
«կ'արձակեն իրենց շուրջը ։» — Շատ գեղե-
ցիկ է այն տեսակցութիւն, որ 2. գլխոյն
մէջ մայր ու աղջիկ կ'ուսենան իրենց ընտա-
նեկան վիճակին վրայ ։ Նոյնպէս և տեղա-
կան հանգամանք մը կը կրէ Է. գլուխը ։
Քանի՛ Քանի՛ անկեալ այրեր իրենց կնոջն
ըսած են ու կը լսեն արդեօք սա խօսքեր
դո՛ր Տիկին Վարսանեան կ'ուզէ իւր ա-
մուսնոյն — «Սյր մարդ օւն պարտքն է դը-
«րամ վաստիլի և իւր ընտանիքը խնամել ։
«Իսկ դու ո՛չ միայն զայդ անկարող ես գոր-
«ծելու, այլ եւ կը պարտաւորես իմ միակ
«պաւակս տունէն դուրս ելնելու ։ Քեզ նը-
«ման այրեր լաւագոյն է որ չի ծնանին, զի
«պարզապէս բեռ մ'են աշխարհին վրայ ։

Աշխիւ բարեկամահայ մը՝ Վարդանոյշի
միջնորդութեամբ՝ Սրաքիա Սրաքեանց
տունը կը մտնէ իւր վարժուհի երկու ման-
կանց սրբ խորթ մօր մը խնամց յանձնը-
ւած են ։ Այդ խորթ մայրը՝ Տիկին Սրաքա-
եան՝ տխար մ'է որ ո՛չ մէկ երկրի, ո՛չ մէկ
աղգի կը սլափանի, այլ բոլորին ալ ամե-
նութեք կը դանենք զայն, որ իւր դեղից-
կութեան, իւր անողորմ գեղեցկութեան
շուրհիւ, աշխիւ, հարուստ ու տարեց ա-
մուսնոյ մը անուան ներքեւ ապաստանած՝
անարգել կը նետուի մոլութեանց վրին մէջ ։

Արարի է միայն դիտել թէ այրը նուազ խնամով նկարագրուած է քան կինը . անհաւատալի է , օրինակի համար , որ Պ. Արգարեանի պէս բարեգործով հայր մը՝ որքան ալ անհետրական գործերով պաշարեալ իւր երկու փոքր մանկանց վիճակովն այն ատեն միայն բիշ մ'զբաղել նկատ , երբ անոնցմէ մին մահուան դռուն հասած է արդէն :

Գոհարի պէս երիտասարդ մ'է Ներսէս Պ. Արգարեանի իւր առաջին կնոջմէն ունեցած զաւակն , և Արաքսիայի հետ իւր սիրահարութիւնը շատ ի դէպ է , միայն թէ բիշ մը աւագարանօր կնքուած : Երբ սէր մը տուալին վայրկեանն չի ծագիր , երկու նայուածքներու առջին հանդիպումէն ու երկու սրտերու առաջին բարախումէն , յայնժամ պէտք է որ առկա առ առկա արմատ ձգէ : Զօնքանանք այդ սիրոյն վրայ որ բոլորովին առաքինութիւն կը բուրէ ու մեր օրերու մէջ այնքան հրապուրիչ չայտի երեւի ոչ մէկ երիտասարդի ու երիտասարդուհոյ : Արաքսիայի ներկայութիւնն ի սկզբան աննշան կ'անցնի այդ հարուստ տան մէջ ուր այրն իւր գործերն ունի և կինն . . . ուրիշ գործեր . . . բայց Ներսէսի յայտնի համակրանքը Տիկին Արգարեանի կատկածը կը յարուցանեն . . . այդ վայրկեանէն կ'սկսին դաւեր ու մեքենայութիւնք : Արաքսիայի աղքատից երիտասարդ մը , Սիւսի , նոր վերադարձած Փարիզէն , կ'սկսի յաճախել Արգարեանց տունն և հաճոյ կ'երեւի Տիկնոջ Տիկին Արգարեան մէկ կողմէն բուռն տարփանք մ'զգալով Սիւսիի համար , միւս կողմէ յարմար գործիք մը կը նկատէ զայն , Արաքսիան մեղապարտ երեցնելու համար յաշտ Ներսէսի : Եւ կը յաջողի : Այդ մեքենայութեանց ու դարձումածներու , ինչպէս յաջորդ դէպքերուն մէջ կ'ան կէտեր որք գուցէ բռնազրօսիկ երեւին , թէեւ մեծաւ մասամբ ամեն ինչ լաւ յարգարուած է :

Յիշենք քանի մը պարագայներ որք ամենէն աւելի ուշադրաւ են :

Վարժուհւոյն ու Սիւսիի գիշերային ժամադրութիւնը , որքան ալ բարի նպատակի մը համար , խելքի շատ մօտ չէ և Արաքսիայի նման ծանրախոհ աղջիկէ մը այդպիսի անխնայութիւն չնպաստելու բնաւ : Սիւսիի նկարագրին հաճոյքով կրնայ կարգացել . այդ կնախաճոյ երիտասարդն որ առաքինութիւնները կ'առէ ու մոլութիւնները կը սիրէ և այդ սիրային սաղմագիտութեան մասին ըսելիք չիկայ , բիշ անգամ այդքան լաւ պատկերացած է մեր վէպերու մէջ : Ներսէսի յարաբերութեան խզման նամակն առ Արաքսիա կրնայ իւր օրինակ տանել իւր անտակին մէջ : Ընդհակառակն Տիկին Արգարեանի նամակն (էջ 254) առ Սիւսի՝ անհաւատալի է . ոչ մէկ կին իւր գրով , իւր անուան սկզբնատառերով այդ տեսակ նամակ կ'ուղղէ Սիւսիի նման տարփածուի մը : Տիկին Հարթմանեան երկրորդական դեր մ'ունի , ուստի աւելորդ է խօսիլ իւր վրայ . ըսենք անցողակի թէ փափկակալութեամբ տկար կին մը իւր հիւանդութիւնը դարձնելու համար բնաւ չ'փորձեր Վոնտի երթալ . Դոնաուրաւ կը հաւատարմութիւնն որ Սիւսիի վարքն ու բարքն ունեցող երիտասարդ փոստաբան մը Պ. Գրիգորի նման գաւառացւոյ մը կողմէ հրաւիրուելու դատի մը պաշտպանութեան համար . գաւառացիք շատ հազուադէպ առիթներու մէջ փոստաբան կը հրաւիրեն Պոլսէն և իրենց ընտրութեան մէջ չեն խաբուիր : Դարձեալ , անհաւանական է որ Պ. Արգարեանի նման դրական անձ մը մէկ վայր-

կէնի մէջ հաւանի որ իւր անդրանիկ որդին , իւր ժառանգն , ամուսնանայ ամուսնի վնասուած տղաքա վարժուհւոյ մը հետ . ոչ մէկ ընդդիմութիւն , ոչ իսկ փոքրիկ դիմողութիւն մը , կարելի՞ բան է . . . Բայց այս մանրակրկիտ ուսումնասիրութիւնը և իւրաքանչիւր դէպքի յիշատակութիւնը կրնան հետզհետէր տանել զմեզ չորտի փորձներ ուրեմն հետեւիլ Ներսէսի ի Մանչէսթըր , Սիւսիի ի Փոքր Ասիա , ու պատմել միանգամայն ինչ որ կը կատարուի աստ Արգարեանց ու Վարսամեանց տան մէջ : Բիշ շատ վիպական կենաց անգեակ մէկը դիւրաւ պիտի գուշակէ թէ վերջ ի վերջոյ Արաքսիայի անմուղութիւնն հաստատուելով , Ներսէսի կինը պիտի լինի նա . Սիւսի կ'ես պիտի ամուսնանայ Վարդանոյի հետ որ իրեն համար կը հիւժէր : Բայց որքան դաւնութիւնք , որքան պատրանք , որքան հալուածք մինչեւ այդ վախճանին հասնելու համար : Պէտք է կարդալ ամբողջ ԱՐԱՔՍԻԱՆ , զի ամենփոքր մը , նիւթին մէկ համառօտութիւնը կ'ախարհէ մը կը դարձունեն զայն :

Տիկին Տիւսար իւր վէպերը կը գրէ մաքուր աշխարհաբանով , և գուցէ քիչ մը շատ մաքուր աշխարհաբանով , զոր ոմանք իւր թերութիւն կը նկատեն . ճշմարիտ է թէ իւր դիւցազունք ու դիւցազնուհիք կը խօսին լեզուաւ մը որ ուրեք ուրեք յիշատի դիւցազնականի կը դառնայ և անճաշ . օրինակ , ընթերցողին ականջին խորթ կը հնչէ , երբ Տիկին Արգարեան , իւր յարաբերութեանց միջնորդ գնահիկ կնոջ մը հետ խօսելով զլուր ինձ իսկուհիս կը գոչէ նմա , երբ Ներսէս ու Արաքսիա , իրենց սիրային յարաբերութեանց ամենէն տաք մէկ վայրկեանի կը խօսին իւր Պօզ ու Վիրգիլէն : Եւ ամբողջ գուցէ զքեզ յանձնախ չեմ պաշտեր լարիցն , առ աւելին կը փափաքիս արգելօք ինչո՞ւ չես գտնդաւիր ուրեմն արեւուն լոյսին անբաւականութենէն և անձ իրին անհամարժեք լինելէն Մէն մի փափախում սրտիս զսէրն իմ ունի իւր շարժառիթս և այլն : Բայց վերջապէս ճաշակի խնդիր մ'է այս ու ԱՐԱՔՍԻԱՆ հեղինակին նման բարձր դաստիարակութեան եւ ազնիւ ճաշակի տէր Տիկին մը շատ պիտի յոգնեցունէր ինքզինքը գրելու համար աւելի միջակ լեզուաւ մը : Փոքրանք յարել որ , եթէ խօսակցութեանց մասն հակակրօններու կը հանդիպի , ընդհակառակն նրկարագրականներն յոյժ բնական ու ճշմարիտ են և խորհրդածութիւնք լաւ ուսումնասիրած գրչի մ'արդիւնք , հետեւաբար ընդհանուր գնահատման արժանաշա՞մ : Սրտի ու հոգւոյ խնդիրներու և զգացմանց ուսումնասիրութեանց մէջ Տիկին Տիւսար կը յիշեցունէ . զմտք ման , ախքան խորը կը թափանցէ սրտին ու հոգւոյն և այնքան լաւ գիտէ պատկերել տպար մը , զգացում մը , տեսարան մը : Սան-Սի-Ֆրանցիսկո նկարագրին հիանալի է . Վարսամեան ընտանեաց մանրանկարն վրձինէ մ'աւելի որոշ ու անգու գրչով ներկայացուած , այլ ամենէն աւելի իսկատիւ է հարսանեաց նկարագրին : Կը գլխոյն մէջ և ամենէն աւելի յուզիչ է Աղաւթի ճաշն , յաջորդ գլխոյն մէջ . այդ հիւժեւալ մանկան չի՞նք չգիտես որպիսի մեղամաղձութիւն մը կը թողու ընթերցողին վրայ ու մտածել կուտայ :

Ի վերջոյ , կը մաղթենք որ չ'իրականանայ այն երկիւղ զոր Ազնուաշուք հեղինակն ԱՐԱՔՍԻԱՆ գնահատելի համեստութեամբ

մը կ'ազդէ գրչին սկիզբն , իւր երբորդ եւ քուցի վերջն երբ անուանելով զայն ԱՐԱՔՍԻԱՆ , պէտք է խոստովանիլ , իւր ամբողջութեամբ ընտիր գործ մ'է որ պատիւ կը բերէ հեղինակին և եւանդուն Հրատարակչաց : Ուստի դրական դեռ շատ գեղեցիկ երկասիրութիւններ ականակելու իրաւունք ունինք այն գրչէն որ գրեց և այն մտքէն որ երկնեց ՄԱՅՏԱՆ , ՍԻՐԱՆՈՅՇՆ ու ԱՐԱՔՍԻԱՆ :

ԳԱՄԵՐ

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԴԵՐԱՍԱՆՈՒՅԻՆ

(ՆՈՐԱՎԷՊ)

Է .

Օրթագիւղ , դառիվերի մը կատարին վրայ էր այն տուն ուր կը բնակէր դերասանական խումբն : Զմայեցաւ Արեգնազ երբ անդ մտաւ . փոխադրուած էր նոր աշխարհ մը կը պարզուէր հանդէպ իւր աչքերուն Վոսփրի գեղազուարճ տեսարաններէն մին : Որքան տարբեր Գոմ-Գաբուի այն նեղ փողոցէն ուր կ'ործես թէ բանտարկուած էր բերդի մը մէջ : Այդ դիտելու ու կը դիտէր , յափշտակուած էր այնքան մինչ չի կարցաւ նշմարել թէ՛ սենեակին յորում կը գտնուէր ինք դերասանուհիներուն հետ , գրեթէ մերկ էր . ոչ գորգ կար եւ ոչ փափաթ . չէր այն տաքուկ սենեակն ուր լոյսն եթէ չէր թափանցեր չառնորէն , գէթ ցուրտ հովերն ալ չունէին լայնարձակ անպարէզ ինչպէս աստ :

Շատ քալած էր Արեգնազ եւ տաքացած . բայց երբ անցաւ տաքութիւնն սկսաւ մրսիլ . այն ատեն դիտեց չուրջը Փորթիկ վառարանի մը մէջ կը նշմարուէին երկու երեք նշմարեաներ նախկին կրակներու : Գերասանները կը կարգադրէին մէջերին թէ ո՞վ այն երկուցիկն պիտի երթար թէ՛ ամուսն անուր եւ թէ՛ ուրիշ պիտոյքներ հայթայթել :

Խուսքը վարձած էր այդ տունը , թէպէտ ոչ մի վճարում չ'ըրած . չէին մինչ այն ատեն . կ'ապրէին օրն օրին , կէս կուշտ , կէս անօթի : Գերասաններէն մին կ'իջնէր ամէն օր վար , չուկայն , կը դնէր բաշ մը ամուսն . զոր կը դնէր թափանակին մէջ եւ կը բերէր տուն , կը հոգար նստել խուսքին նոյն տունը ուստիս պաշարը : Մեծ բան չէր այդ պաշարը . մի քանի հաց , մի քիչ պանիր , երբեմն ձիթապտուղ կամ Բազն հեղու :

Եւ սակայն այդ աղքատութեան մէջ ուրախ եւ զուարթ էին դերասաններն : Երբ մտնէր կրակեց , թեւ ի թեւ , ցատկելով , խօսելով եւ խնդալով իման զառ ի վայրն , գացին թատրոն ուր պիտի ներկայացնէին Հիւկոյի Մաքի Թիւրքը :

Դատարի էր թատրոնն . հազիւ մի քանի օրեակներու մէջ , եւ գետնայարկը կը տեսնուէին մի քանի դէմքեր : Տարաբաղ զի՛նք անկի մէջ էր Բարեւէր ընկերութեան այդ թատրոնն որ տակուին չոր չ'իյնաւ , մի տարի առաջ կեղծոն մ'էր մտաւոր . զբօսանաց եւ հրճուանաց : Բայց մահն ու դժբաղդութիւններն անցեր էին Օրթագիւղի վրայէն : Մեկնած էր աղիւս հոգի մը , գեղեցիկ տաղանդ մը որ կեանք կը շնչէր ոչ

(*) Շարունակութիւն Յունուար 10 և 17 թիւերէն :

միայն Օրթոգոնի ալ եւ ամբողջ հայ գը-
րականութեան եւ գեղարուեստից։ Իւր
շուրջը բոլորած դերասան ու գերասանու-
հի, բանաստեղծ եւ գրագէտ, կը կենդա-
նացնէր ամէն ինչ, եւ այդ թատրոնն, իւր
ձեռակերպը, փոքրիկ Ակադեմիա մը կը հա-
մարուէր։ Յետոյ ուրիշ աղէտներ ծանրա-
ցած էին գիւղին վրայ եւ ամէն ոք մոռցած
էր թատրոնը։ Բայց թատրոնական խումբը
տակաւին քաջութեամբ կը յարատեւէր
ներկայացումներ տալու։

Տխուր անցաւ այդ գիշերուան ներկա-
յացումն։ Արեգնազ օթեակի մը մէջ նստած
կը դիտէր զարմացած, երբ բացուեցաւ իւր
դիմացի օթեակն եւ երկու անձինք մտան,
մին՝ Երմոգինէն էր։ Շատագուհեցան ե-
րեսները, չէր կրնար ուշադրութիւնը տե-
սարանին նուիրել, կ'ամաչէր դիմացը նա-
յելու, բայց մերթ ընդ մերթ ակնարկ մը
կուտար։ Այդ ակնարկներու միջոցին տե-
սաւ թէ՛ Երմոգինէն էֆէնտի ակնոց մը հա-
նեց, դրաւ եւ կը նայէր իրեն ու կը խո-
սէր ընկերոջն հետ։ Խորակոյս չկար թէ
խօսքն իւր վրայ էր։

Երբ խաղը վերջացաւ այն ատեն միայն
Արեգնազ ելաւ իւր օթեակէն եւ գնաց քն-
ուր համախառնած էին դերասանը ու դե-
րասանուհիք, եւ երկու երեք երիտասարդ-
ներ, որոց մէջ էր Երմոգինէն։

— Ի՞նչ է այս, կ'ըսէր դերասանաց Եր-
մոգինէն էֆէնտին, ձայներնիւ չեղներ, յոգ-
նած կը խօսիք, խաղը ջլատեցիք։ արդեօք
իմ խաղս ալ այսպէս պիտի ընէք։

— Ի՞նչ ընենք, պայտասանաց դերա-
սաններէն մին, շաբաթ մ'է, էֆէնտի, որ
պատառ մը տաք կերակուր չէ սահած մեր
կոկորդէն վար։ շաբաթ մ'է պանիր հաց
կուտենք, եւ կ'ուզէք որ առողջ ու դիմաց-
կուն կուրծքով տեսարանին վրայ ելնենք։

Փոքր ինչ անհաճոյ թուեցան այն խօս-
քերն, եւ մի քանի վայրկեան լուռութիւն
տրեց։ Երիտասարդներէն մին հեռացաւ
եւ թէյ ապսպրեց ամէնուն համար։ Գե-
րասան ու դերասանուհի լայնեցին թէյը
նստան այն ձանապարհորդներու որք կոր-
սուած աւաղուտ անապատի մը մէջ եւ կի-
սամեռ ծարաւէ, կը գտնեն ջրի աղբիւր մը։

Արեգնազ ալ առաւ իւր դաւաթը, բայց
չատ ամփոտ, շատ շնորհալի կերպով։ Տես-
նելով զնա դերասաններու մէջ, Երմոգինէն
զարմացած մօտեցաւ տնօրէնին եւ հար-
ցուց թէ ո՞վ էր այդ աղջիկն։

— Ա՛հ, ձեզ իրարու ներկայացնելու մոռ-
ցայ, ըսաւ տնօրէնն եւ հետն առնելով Եր-
մոգինէն մօտեցաւ Արեգնազին։ Ներկայա-
ցուց երկուքն իրարու, յայտնելով թէ՛ Օր-
Արեգնազ դեր մը պիտի ունենայ Երմոգինէն
էֆէնտիի մեծ ողբերգութեան մէջ։

Տնօրէնը մեկնեցաւ եւ Երմոգինէն գամ-
ուած տեղը մնաց։ Իբր գրագէտ, իբր բա-
նաստեղծ, պարտաւոր էր ցոյց տալ թէ՛
գեղեցիկ աղջիկ մը, որ երիտասարդ էր, խո-
րին տալաւորութիւն կը թողուր իւր վրայ։
Խօսեցաւ Երմոգինէն, երկար խօսեցաւ Բա-
ռեքը կարգաւ, իբր թէ շարագրուած լի-
նէին, կուգային իրարու ետեւէ։ ոչինչ կար
նոր, բայց ամէն ինչ նոր կը թուէր։ Արեգ-
նազին որ կենացը մէջ առաջին անգամն էր
որ կը խօսակցէր վկայեալ գրագէտի մը
հետ։

Ետ չմնաց Արեգնազ, յայտնեց, ինչպէս
աղջիկներն ու կիները միայն գիտեն յայտ-
նել, իւր սքանչացումն Երմոգինէնի գրու-
թեանց մասին։ խօսեցաւ թէ՛ մեծ ուրա-
խութիւն էր իրեն համար որ դեր մը պիտի
ունենայ։ Եւ Երմոգինէն աւելի ուռած, ա-

ւելի փրցած խոստացաւ թէ պիտի պա-
հանջէ որ կարեւոր դերն իրեն տրուի։

Գիշերը կը յառաջանար, պէտք էր բաժ-
նուիլ, Արեգնազ իւր խումբին հետ գնաց
իրենց բնակարանը։ անկողին մ'ալ կրնանք
ըսել գրէթէ անկողին մ'ալ իրեն պատ-
րաստուած էր։ Չէր նմաներ իւր տան փա-
փուկ անկողնոյն, բայց Արեգնազ եւ ոչ իսկ
ուշադրութիւն ըրաւ, սիրտը գոհ, լի ար-
տաքոյ կարգի ուրախութեամբ եւ ոչ իսկ
կրնար ննջել։

Ը.

Յաջորդ օրն առաւօտուն, Երմոգինէն է-
ֆէնտին այցելեց դերասաններու տունը։
Արեգնազ մասնաւոր բարեկամութեամբ
գնաց նորա մօտ։ Խօսակցութեանց առար-
կայն էր Երմոգինէնի ողբերգութեան ներ-
կայացումը։ Կարգադրեցին թէ երբ տեղի
պիտի ունենայ ներկայացումը, առ առաւելին
մի ամիս վերջ։ Հեղինակն ու տնօրէնը դե-
րերը բաշխեցին։ Արեգնազ ունեցաւ դե-
ղեցիկ դեր մը։ Ղէմքն ու ձայնը կը բարե-
խօսէին նորա համար։

Երանութեան օրեր էին Արեգնազի հա-
մար փորձի օրերը։ Կ'ընէին թատրոն ուր
չատ անգամ ներկայ էր հեղինակն։ Երմո-
գինէն կ'սքանչանար Արեգնազի մասին։ Միակ
անձն էր ամբողջ խումբին մէջ որ գիտէր
ըստ բաւականին հայերէն լեզուն եւ կը հաս-
կնար այն դերերն զոր կ'ուսանէր։ Արտա-
սանելու եղանակն, առողջ շնչադն ակնե-
րեւ կ'ընէին թէ նորեկ դերասանուհին զը-
րական կրթութիւն ստացած էր։

Արտաքոյ կարգի չբեղ կերպով կատար-
ուեցաւ առաջին ներկայացումն։ Օթեակնե-
րէն ոչ մին պարապ էր։ Օրթագիւղի երի-
տասարդութիւնը մասնախումբ մը կազմած
էր օժանդակելու այդ ներկայացման յաջո-
ղութեան։ Այլ եւս ձանձրացած էր այդ
երիտասարդութիւն թարգմանութիւններու
հանդիսատես լինելէ։ Իրեն համար յարգե-
լի էր հեղինակութիւն մը որքան ալ տկար
լինէր։

Երիտասարդներու եռանդը բորբոքելու
մասին բաւական մեծ բաժին մը ունեցած
էր Արեգնազ։ Տեսած էին թատրոնին մէջ
այդ Ղէմքն։ Համաւը տարածուած էր, հա-
մակրութիւն կ'ազդէր երիտասարդներու։

Արեգնազ ոչ մի յոյս ի գերեւ հանեց։
Կարծես թէ փորձառու, վաղեմի արուես-
տագէտ մ'էր։ Աներկիւզ կը կատարէր իւր
դերը։ Շարժումները, ձայնը, ամէն ինչ բը-
նական կը թուէր։ Հանդիսականներն յա-
փըշտակուած էին այդ թարմ եւ առողջ
ձայնէն, այդ մանկունակ ժպտուն երեսէն։
Ծափահարութիւններն որոտընդոտ էին։
ամէնքը սրտէ բղխած։ Յաղթանակը կա-
տարեալ եղաւ։

Մոռցուեցան ողբերգութեան բոլոր թե-
րութիւններն։ Հանդիսատեսները լի եռանդ-
եամբ հեղինակ, հեղինակ կը գոչէին։ Եւ
հեղինակն, որ արդէն կ'ապասէր, ներկայա-
ցաւ բեմին վրայ եւ լսեց զկեցցէններն։

Արեգնազ անպատում ուրախութիւն
ունէր ոչ այնքան իւր յաղթանակին համար
որքան Երմոգինէնի փառացը մասին։

Կ'ըմբռնէր Երմոգինէն թէ ինչքան պար-
տական էր Արեգնազին, մօտեցաւ նորա եւ
սրտազին շնորհակալութիւններ յայտնեց։
Արեգնազ առիթը գտաւ յայտնելու նմա
իւր բոլոր սքանչացումն։

Այդ օրէն վերջ ներկայացումները կը
կրկնուէին։ Դերասանական խումբը գումար
մը կրցաւ ձեռք ձգել։ Արեգնազ ունեցաւ

իւր բաժինը, նա մանաւանդ փուռներն ու
ընծայները։

Գրպանը դրաւ ստակներն Արեգնազ եւ
օր մը գնաց Գում-Գաբու։ Յորմէ հետէ
մեկնած էր իւր տունէ, մի քանի անգամ
նստակ գրած էր մեծ հօրը։ պատասխան
ընդունած էր բայց բնաւ չէր գնացած։ Նորա
մօտ։ Ի՞նչ օգուտ երթալ դատարկ ձեռքե-
րով։ Այլ այժմ կ'երթար վատահօրէն։

Ինչպէս գրկախառնեցաւ Էֆտիկ, ինչ-
պէս համբուրեցին զիրար։ Մեծ հայրը վերն
էր, մի քիչ տկար, կարող չէր վար իջնել։
այսպէս ըսաւ Էֆտիկ։ Վազեց վեր ելաւ
Արեգնազ, մտաւ սենեակն, անկիւնը նըս-
տած էր ծերունին, վերմակ մը ոտքերուն
վրայ։ Արեգնազ բոպէ մը կանգ առաւ։ շատ
փախուած տեսաւ մեծ հայրը, նիհար, վա-
տոյժ, կարծես հող կը հոտէր։ Պաղած
մնաց Արեգնազ, բայց գնաց պագաւ մեծ
հօրը ձեռքերը, նա ալ ուժով ուժով համ-
բուրեց թոռնիկը։

Շատ ծանր եկած էր իրեն թոռանը մեկ-
նիւր։ վերանորոգուած էին իւր բոլոր հին
ցաւերը, նորերն ալ վրան բարդուած։ Այդ
օրէն ի վեր հետզհետէ կ'աւելնար։ ցերեկ-
ներն ինչ եւ է ժամանակ կանցունէր։ գիշեր-
ները, ձմրան այդ երկար գիշերներն ոչ ոք
կար բաց Էֆտիկէն որ իրեն հետ խօսէր,
որ գիրք մը կարդար եւ ինք մօտիկ ընէր։ Քիչ
մը կրնար կարդալ, բայց աչքերը շուտ կը
յոգնէին։

Եւ յետոյ կը տարածուէին չարաչառկ
լուրեր որոց չէր ուղեր հաւատալ, բայց սըր-
տադողի մէջ էր Երմոգինէն խօսած էր Գում-
Գաբուի մէջ Արեգնազի վրայ։ Թուի թէ
գովեստները չապլած էր, եւ հարկ եղած
խոհեմութիւնը չէր ունեցած։ Այդ խօսակ-
ցութիւնները տարածուած էին տուններու
եւ սրճարաններու մէջ։ Պառաւները դրա-
մաշուլ ըրած էին զայն իրենց։ խեղճ աղ-
ջկան պատիւն ոչնչացած էր։ «Աստուած
հեռու ընէ, կ'ըսէին դրացիները, ադ գէշը
ոտք չպիտի կոխէ ալ աս տեղը»։ Պատրիար-
քարան պիտի դիմէին եթէ Արեգնազ վե-
րադառնար այն տեղ։

Մաս մը այն լուրերէն կը հասնէր Պատ-
ուելիին ականջն, եւ ծերունեայն սիրտը
տակն ու վրայ կ'ըլլար։ Անէծքներ կուտար
Երմոգինէնին, զոր կը համարէր իրենց թըշ-
ուառութեան սկզբնապատճառը։

Մոռցաւ Պատուելին ամէն ինչ ի ներ-
կայութեան իւր թոռանը, խօսեցնել կու-
տար, մօտիկ կ'ընէր, կարօտը կ'առնէր։ Էֆտիկ
ձարեց ձարձրիկեց լաւ կերակուրներ պատ-
րաստեց, ուրախութեամբ սեղանը կը դնէին
նստած սենեակինին որ շատ տաքուկ էր։
Ամէն բանի վրայ խօսեցան։ Արեգնազ հա-
նեց մեծ հօրը տուաւ մի քանի ոսկի, ու-
նեցածին կէսէն աւելին։ Պատուելին դըժ-
կամակեցաւ ընդունիլ արդեօք արեան գի՞ն
էր։ բայց Արեգնազ տխրեցաւ։ Պատուելին
առաւ ստակները թոռանը սիրտը չկտրե-
լու համար։ Բաց աստի, ո՞րքան ժամանակ
էր ոսկիին երեսը տեսած չէր։ Սրտանց
գոհունակութիւն ունեցաւ։

Գիշերը մէկ սենեակ պառկեցան Արեգ-
նազ եւ Էֆտիկ, շատ խօսեցան։ Էֆտիկ կա-
տիկ կարող չէր բերանը բռնել, խել մը բա-
ներ ուզեց հասկցնել։ Արեգնազ, այնքա՛ն
անմեղ, այնքա՛ն միամիտ, չէր թափանցեր
Էֆտիկի խօսքերու հոգւոյն, բայց կը հաս-
կընար թէ բանէ մը վշտացած է մեծ հայրը։

Յոգնած էր, չկրցաւ դիմանալ եւ քնա-
ցաւ։

Յաջորդ օրը պէտք էր անպատճառ մեկ-

նիւ. ինչ որ ըրին միւս գիշերը չկեցաւ, կարգադրութիւններ կային, իւր ներկայութիւնն անհրաժեշտ էր: Բայց խոստացաւ շուտ վերադառնալ: Ո՛չ ապաքէն արդէն քիչ ատենէն այլ եւս կը վերջանար. ներկայացման եղանակն ու ինք բոլորովին պիտի գար:

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ
(Մնացեալը յաջորդ թիւով)

Ա Ս Ս Ի Ա Ն Տ Ի

— Գիտէ՞ք, ինչ բան է որ ամենէն աւելի գոհունակութիւն կը պատճառէ կընծի մը:

— Իւր գեղեցկութիւնը:
— Ո՛չ... ուրիշ կնոջ մը տղեղութիւնը:

Սիրտ ու միտք ունեցող մարդը զիպուած ծով միայն կրնայ հարստանալ:

Անհաւատ մարդն ոճրագործ մը չէ այլ գծադրէ արարած մը:

Վրէժ խնդրութիւնն աստուածոց եւ կանանց զրօսանքն է:

Եթէ սէրը կոյր է, ինչո՞ւ համար շատ անգամ մութ տեղումներ կը փնտռէ:

Ամէն մարդու հետ խաղաղ ապրելու համար, չքաւեր միայն ուրիշներու գործին չի խառնուիլ, պէտք է նաեւ հանդուրժել, որ ուրիշները խառնուին մեր գործոց:

Այո՛ր մը որ իւր բարեկամութեան վրայ կը խօսի կնոջ մը հետ, դայլ մ'է, դառան մորթ հագած:

Կանայք բարեկամահիներ չունին, հապա միայն մեղսակիցներ:

Ամուսնութիւնը վիճակահանութիւն մ'է յորում շահող թիւերը քիչ են:

Ուղտը եօթն ութ օր կ'աշխատի առանց խմելու. այսու կը տարբերի տեսակ մը մարդերէ, որք եօթն ութ օր կը խմեն առանց աշխատելու:

Մարդ մը կը ներկայանայ սեղանաւորի մը՝ քանի մը կտրոններու տոկոսն ստանալու համար: Պաշտօնեայն կտրոններու թիւը ճշգրտած միջոցին կը գոչէ:

— Ո՛հ պարոն, ձեր արժէթուղթն երկու տարի առաջ 200,000 ֆրանք շահած է:
— Երկու տարի առաջ: Ո՛հ, Տէր Աստուած, ըսել է 20,000 ֆրանք տոկոս կորսնցուցած եմ:

Դասարանին մէջ:
Ընթերցանութիւն Ս. Գրոց:
« Եւ Ղովտայ կինն, ետին դառնալուն համար, աղի արձանի չիօխուեցաւ: »
— Ըսէ տեսնեմ, Պետրոս, կ'ըսէ վարժապետը, Ղովտայ կինն ինչո՞ւ ետին դարձաւ:

— Արովհետեւ անկէ ուրիշ կին մը կ'անցնէր, գլուխը նոր գլխարկ մը դրած:

Աղախին մը մէկէն ի մէկ կը բանայ տիկնոջը սենեկին դուռն եւ կը ասեսէ երիտասարդ մը անոր առջեւ ծնրադրած:

Քանի մը օր յետոյ, մի եւ նոյն անձը նորէն կը ներկայանայ:

Եւ սպասուհին, դահլճին դուռը բանալով, կը ծանուցանէ:

— Պարոն Ք... Տիկնոջ ոտնաքոյժը:

Օ Ր Ա Գ Ի Ր

Մեզ կը հաղորդեն թէ՝ Ֆրանսայի Ժառանգ Սալա Սալան ամառներ ի մէջ Հայոց մասին կարեւոր յօդուած մը հրատարակած է Պ. Պառթէլի-Սէնդ-Լէս, Ֆրանսայի արտաքին գործոց նախկին նախարարն:

— Պ. Ռաֆայէլ Պատկանեան (Քամառ-Քաթիսլա) վատաւորը վիճակի մէջ լինելով, բարեկամները խորհուրդ տուին նմա իր խաղաղութիւնը Նոր-Եալիքեանէն ի Մոսկուա ուր կարենայ դարմանուիլ ճարտար բժշկաց խնամքը:

— Պաշտօնի մէջ մեծ հրէշ ծաղելով, այբեր է Մարդասիրական ընկերութեան վարժարանը: Տեղւոյն ազգայինք անմիջապէս հանգանակութեան ձեռնարկելով, հաւաքեր են 10,000 րուպի, դպրոցը վերստին կ'առուցանելու համար:

— Միացեալ Ընկերութեանց Հայաստանի դպրոցներու Տեսչին եւ փոխ-տեսչին ձերբակալումը հաղորդած էինք: Արեւելք կը ծանուցանէ թէ՝ Կայս. Կառավարութիւնը կանխածելով որ այդ անձինք կը մասնակցին դանազան հրատարակութեանց, այդ հաճոյ չեն Կայս. Կառավարութեան, ձերբակալած է դանոնք եւ դրամած. նոցա թուղթերն, որոց մէջ եթէ չգտնուի ո՛ր է գրութիւն որ կարենայ արդարացի կասկածներն, ազատ պիտի թողնուին վերստին:

— Ազգ. Վարչութիւնը վերջնական կերպով պատրաստեց այն կանոնագիրն՝ որոյ պարտին հղատակիլ ազգային ամէն ընկերութիւնը: Այդ կանոնագրի տրամադրութեանց համեմատ այլ եւս գոյութիւն չպիտի ունենան Կեդրոնական երեսփոխանան. Կան ժողովներ եւ ո՛չ ալ ընկերութեանց երեսփոխաններ, այլ ամեն ոք որ կը վճարէ իւր բաժինը պիտի համարուի ընկեր եւ ընկերաց միութիւնը պիտի կազմէ ընկերութեան Ընդհ. Ժողովը:

Ը Ն Տ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Յ Ո Ւ Ն Ա Յ Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ի Ն

Երէկ, ուրբաթ, Յունաց ընտրողական Ժողովը ի նիստ գումարուելով ի Ֆէնէր, պատրիարքական ընտրութիւն կատարեց հանդիսաւորապէս եւ Աղբիւնուպոլսոյ Մետրապօլիտ Տ. Դիմիտրի քուէից մեծամասնութեամբ ընտրուեցաւ ՊԱՏՐԻԱՐՔ:

Հ Ե Ռ Ա Գ Ր Ա Ն Ո Ւ Ր Ք

Ա Ճ Ա Ն Ս Հ Ս Վ Ա Ս

Սոփիա, 1 փետր.

Լրագիրը զրոյց տարածած լինելով թէ Պուկար կառավարութիւնն, երկը պատուիր:

րակաց պաշտօնին անգոհացուցիչ արդեանց ի տես, ոչ եւս տրամադիր է կարգադրութիւն մը ընդունիլ. պաշտօնական ձեռքնհաս անձ մը այս մասին հետեւեալն ըսաւ մեզ:

« Պուկար կառավարութիւնն այսօր նոյն տրամադրութիւնները կը տածէ զորս ունէր իշխանութեան հասած օրն. Եւրոպա ղըրկուած պատուիրակութիւնն հասած է իւր նպատակին, որ էր տէրութեանց ծանօթացընել իշխանապետութեան ճիշդ վիճակն եւ մեծ տէրութեանց դահլճներուն խորհուրդներն իմանալ: Ամեն պարագայի մէջ, այդ խորհուրդը նպատաւոր էլին պուկար դատին, որովհետեւ ամեն դահլճք կ'ընեն թէ Պերլինի Դաշնագիրը կ'երաշխաւորէ արդի կառավարութիւնն: Այսօր, որպէս առաջին օրը, Պուկար կառավարութիւնը պատրաստ է ընդունիլ Բ. Դրան այն առաջարկութիւններն որք չեն վտանգեր Պուկարիոյ անկախութիւնն. եւ կը յուսայ թէ Բ. Դրան ստանձնած նախաձեռնութիւնն եւ Բեդերսպուրի դահլճին ցոյց տուած հաշտարար ոգին ընդ հոռւ առաջ կը բերեն լուծում մը որուն ջերմագինս կ'ըզայ Պուկարիա:

Բեդերսպուրի, 5 փետր.

Կայսերական հրովարտակ մը կ'արդէն, մինչեւ ցնոր տնօրինութիւն, ձիերու արտածումը Ռուսիոյ սահմաններէն:

Բարիզ, 5 փետրուար

Ռուսիոյ սահմաններէն ձիերու արտածումը մեծ արտայուցութիւն յառաջ բերաւ Պերլինի Պորտային մէջ, որոյ դնոց անկումը ներգործեց Բարիզի Պորտային վրայ:

Պուքըշ, 5 փետրուար

Երեսփոխանաց Ժողովը հինգ միլիոն ֆրանք քուէարկեց, ի գլուխ հանելու համար սպառազինումները:

Աթէնք, 5 փետրուար

Պորհագարանին բացումն այսօր տեղի ունեցաւ սովորական չքով Թադաւորը կարգաց բացման ճառն ոյր աւատիկ ամբիփումը: «Թադաւորը կ'ոգնունէ ընտրական նոր օրինօք ընտրեալ երեսփոխանաց գալուստն. այդ ընտրական օրինքներ, կ'ըսէ, յոյժ լուր արդիւններ ունեցան. Շնորհակալ կը լինի աղբին այն զբաղմանց համար զորս արտայայտեց դահաժառանգ իշխանին չափահասութեան առթիւ. այս զբաղմունքը կը դնեն սլարտականութիւններ զորս հաճութեամբ կ'ընդունին ինք եւ դահաժառանգ իշխանն: Տէրութեանց հետ յարաբերութիւնը լաւ են եւ կարելի է աշխատել երկրին վերականգնման. Նւթական կացութիւնը ալեւոր ունի աղբին հողածութեան, որ արդէն կ'ընդունի հարկ դատուած ելմտական գոհուրթիւններն, որպէս զի Յունաստան կատարէ իւր բոլոր յանձնառութիւններ եւ վերականգնէ իւր արժանապատուութիւնն որում ամեն ժամանակ աւելի պէտք ունի. Արդէն ծանօթ եւ ուրիշ ներկայանալի օրինադէրու քուէարկութեան շնորհիւ երկրին վարկը պիտի բարձրանայ եւ կարելի պիտի լինի զարգացընել երկրին հասոյթի աղբիւրներն, ընդարձակել հաղորդակցութեան ծախսերն եւ ցամաքային ու ծովային բանակները վերակազմելը»

Ճառը ջերմագին ծափահարեցաւ:

Սրտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԷ ԻՐԱԳՐՈՒ

